Thurnwald

891.99
P-17

42-1
Բ
ՀՈՐԻՕՆ
ԲԵՌ. ՕՐՅԱՆ

ՀԱՌԱՋԱՆՔ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆ

ԽԱՐԲԵՐԴՑԻ

Ամրապինդ բռնած զենքեր մեր ձեռին,
կեանքի ասպարէզ, օ՜ն առաջ նետվինք,
իբրեւ կուռ ամրոց, մեր սուրբ հայրենեաց,
լինինք պաշտպանը, ընդդէմ թշնամեաց։
եւ անեղ ռազմի, գոռ կարմիր դաշտում,
թիկ չի՝ դարձուցանենք երբեք մեր կեանքում։

Հեղինակ

ՏՊ. Ս. ՂԱԶԱՐ - ՎԵՆԵՏԻԿ

1913

891.99
Բ-17

60373
2 9 .08. 2013
13 APR 2011

ՀԱՌԱՋԱՆՔ

891.99
Ք-17
կր.

ՀԱՌԱՋԱՆՔ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆ

ԽԱՐԲԵՐԴՑԻ

1007
32439

Ամրապինդ բռնած գէնքեր մեր ձեռին,
կեանքի ասպարէզ, օ՜ն առաջ նետվինք,
իբրեւ կուռ ամրոց, մեր սուրբ հայրենեաց,
լինինք սպասպանք, ընդ դէմ թշնամեաց։
եւ անեղ ռազմի, գոռ կարմիր դաշտուռն,
թիկ չի՝ դարձուռնենք երբեք մեր կեանքում,

Հեղինակ

ՏՊ. Ս. ՂԱԶԱՐ - ՎԵՆԵՏԻԿ

1913

Հայաստանի Գրադարան



ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻՆ

ԱՐԴԷՆ վաղուց է, որ չէ երևում,
Աստղիկդ ցոլուն լազուրթ եթերում,
Ախով աշխարհէն հրաժեշտ տալով,
Խփեցիր աչերդ, անուշիկ ննջով։

Օրէն սկսեալ մատաղ հասակիդ,
Ժպիտ բնաւին չ'տեսար դէմքիդ,
Կեանքիդ Գոյութեան ամեն վայրկեանում,
Վէրքը անպակաս տեսար քո՛ սրտում։

Այո՛, թէև սրտիկդ լիքլիք խոցերով ծածկուած
Փոխադրուեցաւ յաւիտենականութիւնը,
Եւ լռիկ ննջում ես սև թաւշեայ ամայի մըթին
Դէջ գետնի խորքում, հանդերձ մօր Քոյ՝ գրկախառն
Պարուրուած, բայց և այնպէս այն վաղէմի փայփայած
Իղձերդ արդէն իրականացած լինելով ահա ծածանում
Է քո յաղթանակի դրօշակը։

ՆՈՒԷՐ

ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԻՆԱԿ

Խ. ԱԲՈՎԵԱՆԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ո՞Ւր է՛ս ո՛վ պօէտ քեզ ենք փնտրում,
Արդեօք մի տեղ կա՞ս հայրենեաց գրկում,
Աւա՜ղ անյայտ է տեղդ հանգստեան,
Սուրբ գերեզմանիդ կարօտն ենք քաշում։

Ո՞վ քեզ ամփոփեց դրաւ մէջ հողին,
Ո՞վ կար քո մօտը՝ այն ճգնաժամին,
Մի գուցէ դահիճք կեանքէդ զրկեցին,
Մթ՞թէ այդպէս էր գիրը քո ճակտին։

Ախ, ո՞ր անգութը, անձիդ բռնացաւ
Վառ կեանքիդ արև, քեզանից առաւ
Չի գտուաւ մէն մի՛ որ զքեզ փրկեր,
Կար մինը երկնում, այն ալ էր լռեր։

Հայի դժնդակ աւուրց սգալիր,
Եղար իրապէս անկեղծ պատմագիր,
Հարանց և եղբարց դարտեր պատմելով,
Մեր ծո՛վ վշտերին, վշտեր բարդեցիր։

Տոչորուած ազգիդ սիրոյն հալուեալով,
Նրա հրովը հա՛ միշտ վառուելով,
Ամեն մի՛ բառը, սրբոտիդ խորքերէն,
Նկարագրեր հոգիդ տաղուելէն։

Թէև լռած ես դարտեր պատմելուց,
Արդէն վիրաւոր մեր սիրտ խորվելու,
Բայց գրչովդ կերտած կոթող թանկագին,
Քո տեղ պատմում է «վէրք Հայաստանին»։

«Քո վեհազնութեան պատմական գրոց,
Հանդէպ խորապէս գլուխ ենք թեքած»,
Որ ատով եղար խաւարը ցրող,
Ադամայ մթէն՝ Հային ազատող։

Այդ տընկած ծառիդ, ճոխացան ճիւղեր,
Տերեւով զարդարուն բողբոջ ոստիկներ,
Որուն արմատներ, աստ անդ տարածուած
Կոկոններ տալով, բացեր վարդիկներ։

Եւ արդ պիտ կանգնենք Վեհիդ մահարցան,
Գոնէ անուանիդ հիմնենք օթևան,
Գէթ մի՝ այսպիսով, մեր սէրն յայտնած.
Լինինք սրանով, մեր պարտք կատարած։

ՎԱՐԴԻՆ ՍՈԽԱԿԸ

ԱՂԿԱՆՑ թագուհի՛ վառ կարմիր վարդիկ,
Ի՞նչեր էր ոստիդ սոխակը թռչնիկ,
Քո փթիթ նրբին մէջ թերթիկներուն,
Գլխիկը, դրած սէրդ էր դայլայլում։

Սաստիկ սիրահարուած գեղանի դէմքիդ,
Հա՛ պճրանքներով շուրջդ էր ոստոստում,
Քաղցր մեղեդեաց ելևէջներով,
Առ քեզ ի սրտէ, ներբողներ ձօնում։

Թռթռում էր սիրտը, տրոփում հոգին,
Դողում էր վրադ, չըլլայ որ խամրիս,
Դու էիր միայն նրա բերկրանք։
Առանց քեզի (նա) չունէր երբեք կեանք։

Միշտ տարափում եր վրադ ներբողներ
Սփռում էր շուրջը ծաւալում յեթեր,
Վեհ ոգւով արդէն, սիրոյդ տարւելով,
Այտէդ համբոյրներ քաղէր տիւ գիշեր.

Փշալիր թփիդ վրայէն ժպտուն,
Պիշ նայում էիր քո սիրահարին,
Քողարկուած տերևով ինչպէս նոր հարսի,
Դողարիկ ակնարկովդ հանելով հոգին։

Սա զերդ անմեղուկ խղճուկ էակին,
Գրաւիչ տեսքովդ, ըրիր քո գերին,
Ո՛վ վարդիկ սիրուն, բոսոր պսպղուն,
Քո այդ հմայիչ, չքնաղ պատկերին։

Երբ (նա) մեղմագին սեղմեր էր կրծքում,
Դէմքիդ շոյելով քեզ էր պաչ անում,
Ցանկարծ ֆշրտաց այն անգութ հողմը,
Տիրեց սարսափը քնքոյշ սրտիկին։

Շար շար նրբասուն, շէնշող թերթիկներդ,
Խօլ հողմը հատ հատ պոկեց կոճղակէդ,
Թօշմած թոռոմած աստ անդ ցրցրուած,
Սոխակը ի տես խկոյն խելքռուեց։

Քո վե՛հ երկաթէ իզմիրլեան թռչնեակդ,
Որ էր պաշտելի էակ վարդենեացդ,
Արձակեց ընդդէմ... հուժկու դայլանքներ,
Բայց ա՜ւաղ զքեզ իրմէն խլած էր։

Լեցուեց վշտերով սրտիկը նրբիկ
Արցունք աչերից շիթ շիթ թափելով,
Տուեց հրաժեշտ չոր ոստիդ վերջին
Դէպ լազուրթ եթեր սուրաց լալագին։

Ա Շ Ո Ւ Ն

Ամ աշունը թափեց տերևներ,
Պճնազարդ ծառոց մերկացան ճիւղեր,
Պատեր է մշուշ, եթերն է մռայլ,
Տիրեր ամայանք համայն Տիեզեր։

Սաստկաշանթ կայծակ վերևից խփում,
Գոռ որոտներով, կուում անդադար,
Մէգ մշուշ անձրև, իրար են խառնվեր,
Խիղճը բնութեան կարծես սպառուեր։

Ծովեր կատաղած սոսկ գոչումներով,
Ալիքներ դէզ դէզ, դէս դէն են նետում,
Դէպ ափն են վազում փրփուր բերաններին,
Բաղխում են հուժկու լանջքը ժայռերին։

Թռչունք շուարած հողմից մրրկից,
Կծկուած նստեր չոր ոստիկներուն,
Մելամաղձ դէմքով, նայում են իրար,
Իրաց վիճակին սև օրն են ողբում։

Համակ թռչելով ճախրում են յօդում,
Իսկոյն հապճեպով ետ ետ նանանջում,
Անյոյս դրութեամբ, իջնում ծառներում,
Հովտանքներով կտուցներն սրում։

Դաշտեր ամայի ձորեր ոռոգուն,
Գետեր սրընթաց դէպ ծով են վազում,
Սուգ է աշխարհը ամէն ինչ թմրուն...,
Աննախանձ վիճակ վիշտ ու տրտմութիւն։

Աշունը բերեց ցրտաշունչ օրեր,
Լեռ, բլուր, դաշտեր՝ տխրանք են տիրեր,
Իջած ասպարէզ սուլում է քամին,
Տարերք խառնուած անցեր մին միւսին։

ԳՐԱԴԱՐԱՆԻ
«ՀՈՐԻԶՈՆ»
Բեռ. ՕՐԻՆ

ՍԵՒ ԾՈՎԸ

Ո՛վ դու սև ծովակ, ինչո՞ւ ես յուզում,
Գոռ կոհակներդ միշտ տարուբերում,
Այդ լայնածաւալ գեղանի ափունքդ,
Անհուն դարերով ծեծում ես ծեծում։

Շռինդներդ հապճեպ մին միւսին խփում,
Ջահի պէս ցանցեր դէպ վեր են ուռչում,
Այդ կուտակ կուտակ խիտ Ալկիոններդ,
Գոռ գոչուններով դէպ դուրս նետտում։

Վիթխարի ուռչով, փրփուրներ բաշիդ
Բռնած հեքանքով արշաւում չորս դիդ
Գործելով հա՛ միշտ, անզուսպ արձակում,
Ընկնում փշրւում, ցիրուցիր լինում։

Որոտում ոռնում շուրջդ աղմկում,
Ինչու բերնիցդ պիտակներ թափում,
Խօլ խայտանքներով, ծալք ծալք վէտվէտում,
Սոսկ շոցներով դէպ ափն ես խուժում։

Ալիքներդ բեկ բեկ, ալիքներդ պղտոր,
Զարնում ես իրար անվերջ անդադար,
Քերծելով եզերքդ փախչում ես ետ ետ,
Կրկին հև ի հև վազում ես յ՛ափերդ։

Միշտ վրդով հայեացք նետում ես շուրջդ,
Խոպ խոպ ծոփծալով, պատռում ալիքներդ
Շառաչներդ սարսուռ լսւում են ահեղ,
Ահռելի ձայներ գորշ տարտարոսէդ։

Ալեաց խառնիխուռն տարափներ տեղում,
Երկինք և երկիր, իրար ես խառնում,
Դարու փոսն ինկած չունիս դադարում,
Միշտ սրտիդ խորքէն վշտերդ հառաչում։

Ո՛վ դու սև ծովակ՝ ո՞վ ես որոնում,
Որ ֆշրուն ալիքներդ, դէս դէն վազցնում,
Ա՛լ չկան չկան՝ «Տրդատ և Տիրիդ»,
Որ քո՛ վրայէն դէպ Հռոմ գնան։

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ԱՐՁԵԱԼ մրթագնեց երկինքը Հայուն,
Դարձեալ աւերմունք, գօս Հայրենիքում,
Գոռ որոտ կայծակ շանթ ու շառաչում,
Կրկին արեան ծով, հեկ ու հառաչում։

Ահա լսում է, հեծ ու հեծկլտանք,
Բիւրբիւր բերանից աղի հառաչանք,
Թանձր ահարկու խաւարն է տիրեր,
Մռայլն է պատեր մորմոքող սրտեր։

Այրիացեալ կանայք, հարս աղջիկք կուսանք,
Բռնաբարումի եղած են բաժին...,
Պէս պէս նախճիրներ գործող վայրենի,
Դարևոր (սա) չիք դաւաճան ցեղին։

Միշտ զարհուրելի կարմիր տեսարան
Ընկած է վիճակ խղճուկ հայութեան,
Կրում ահռելի ձիգ երկար դարեր՝
Անվերջ անդադար բէթղեհ'մեան ջարդեր։

Երախայք հանւում ի փորոց մարցըն,
Թրատւում մորթւում, անմեղ էակներ,
Եւ անասելի նոցա եղեռնանք...
Տեսնող մարդկութեան բերում ցնորանք։

Արեան դաշտի մէջ ցնցող հոգիներ,
Տեսէ՛ք անկենդան, Մերազնեայք փոռւեր,
Շպրտուած դէս դէն, ջլատուած դիեր,
Որպէս աշնային թափուած տերևներ։

Մորթեր դէմքերի, քերծուած քերզողուած,
Փշրուած գանկեր, ուղեղներ թափուած,
Մին մինի կողքին, բարդի բարդ ընկեր,
Դաշտք, հովիտք, բլուրք, ձորեր են լեցւեր։

Մանուկներ մատաղ ընկած մայրերու
Արիւններ հոսող կրծքերու վրայ
Օդն է ցնդում նրանց ճչ—ճչանք,
Ինկած լքման մէջ, չունին տէր տէրանք։

Մշուշ է պատեր, երկինքը Հային,
Մրրիկն է փչում... Թորգոմայ տանը,
Կրծքերից վազած, արեան գետակներ,
Արդէն տեսնում է՝ համայն տիեզեր։

ԳԱՐՈՒՆԸ

Ահա Գարունը, պճնուան ծառեր,
Եւ տերևներով զարդարուան ճիւղեր,
Ոստեր ոստերի խիտ խիտ փաթթուած,
Ջորք, բլուրք, հովիտք կանանչ է բռնած։

Լսւում են երգեր համայն կողմերից,
Պէս պէս ձայներով ամեն բերանից,
Եռում է կեանքը հրճւում են սրտեր...
Տիրեր խանդաղանք անհուն տիեզեր։

Թռչուններ խումբ խումբ բուրաստաններում,
Ելևէջներով ոստէ ոստ նետւում,
Նրբին տերեւոց, հեռը խաղալով,
Աղմկում շուրջը իրանց ճոպրանքով։

Ճեղքելով օդը սուրում են յեթեր,
Սաւառնում անծիր, գիրկն հորիզոնում,
Եւ վար իջնելով, աջ ձախ ճախրանքով,
Ծառերուն վրայ իրանց քըթւրտում։

Գեղաթոյր ծաղկունք, թփոց վրայէն,
Հրապուրում են անց ու դարձողին,
Ոստեր ժաժուելով մեղմաշունչ հովէն,
Շարժում են գլուխ, կարծես բարևեն։

Իրանց անուշիկ հոտուն բոյրերը,
Թեթւօրօր զեփիւռն, փչելով մեղմիկ,
Քշելով յուշիկ հեռուն տարածում,
Համայն մարդկութեան բերկրանք ին առթում։

Ծաղկանց թագուհի, վարդն ալ պարտիզում,
Պիշ պիշ նայում է, իր սիրահարին,
Իւր գեղափթիթ տեսքով հմայուն,
Խղճուկ սոխակին ըրեր իր գերին։

Ո՛ըը իջնելով, ոստիկին վրայ,
Երգում է սիրած սիրուհու սէրը...,
Բռնել է ձայնը շուրջը պարտէզին,
Զ'կայ դադարում՝ սիրուն դայլանքին։

Գարունը բերեր պարզ պայծառ օրեր,
Մէգ, մշուշ, ցրուեր երկնակամարէն,
Բացեր եթերը ջինջ կապոյտ դէմքը,
Արդէն ցնծութեան մէջ են ամէնքը...։

1007
32439

ԼՈՒՍԻՆԸ

Ա՜վ դու լուսին, ինչո՞ւ տխուր,
Ցուշիկ յուշիկ ժուռ կուգաս,
Միթէ դո՞ւ ալ Հայի նման
Սև օրերով կը սգաս։

Ո՞ր ամպերը, դէմքիդ քաշած,
Մտմտալով գնում ես.
Մռայլամած ու մելամաղձ,
Անտէր Հային նման ես։

Երբ կ՚երևիս երկնի ծոցէն,
Ամպոց մէջէն լողալով,
Դու տրտմադէմ, հոգսերով լի
Հայերիս պէս միշտ ցաւով։

Այդ օդային տափաստանում,
Զունիս օր մը, դադարում,
Հայի նման անօթևան
Դու ամպոց մէջ թափառում։

Մերթ կը գոցուի, մերթ կը բացուի,
Աղօտ դէմքդ ո՛վ լուսնակ,
Խիտ ամպերը արգիլում են
Տեսքդ ցոյց տալ համարձակ։

Միշտ անմռունչ շրթունքներդ,
Մունջի նման անխօսուն,
Գուցէ քեզ ալ, արգիլուած է,
Բողոք բառնալ պէս Հայուն...։

Անթիւ աստղեր ցան ու ցրիւ
Դիտելով քեզ հեռուէն,
Ափ ի բերան խուլ զարմացմամբ
Հոգսէ ազատ կարծում են։

Մինչդեռ քո հեզ սիրտն էլ ամպոտ,
Հայի սրտին պէս վէրքոտ...,
«Որ կը հեծէ ձիգ դարերով
Օրն ու արևն միշտ սուգով»։

ԶԱՆԳԱԿՆԵՐ

ԱՀԱ զողանչում թովիչ զանգակներ,
Որ իրանց ձայնով, լոյս են աւետում,
Զարթիք ո՛վ Հայեր, ձեր ծանր քնէն,
Բացէք աչերնիդ վեր կացէք մթէն։

Դեռ կուզէ՞ք քնել նաննի օրօրով,
Մի՞թէ չեկաւ ձեր ժամը զարթնելու,
Ալ բաւ չէ՞ տարուէք սին երազներէն,
Որդիք գերութեան միշտ ասել տալու։

Ձեր կենաց փառքը մինչ ե՞րբ ուրիշին,
Թողնէք որ (նոքա) նուշը անուշէն,
Այդ դո՛ւք պի՛տ լինէք... ստրուկ կեանքէն
Փրկող ձեր անձը բռնութիւններէն։

Տեսէք Պալքանեան եղբարց Միութեան,
Լուծն են խորտակում թուրքի բրտութեան,
Կրակ բոց եղած լափում են նրան,
Ըստ իս կսպառնան գահին տապալման։

Մի՞թէ որ Հայեր դուք հա՛ շարունակ,
Դարեր համընթաց պիտ այդպէս մնանք...,
Ելէք՝ ձեր տեղից, զարնում են զանգեր,
Քնանք ի ժամին արդէն վերջն եկեր։

Ահա՛ զողանչում դղորդ զանգակներ,
Զարթիք ո՛վ եղբարք, նայեցէք շուրջ ձեր,
Գիրկն խաւարին հերիք չէ՞ նիրհէք,
Ամէն ո՛ք ելեր, է՞ր դուք մնացեր։

Ն. Ս. ՕԾՈՒԹԵԱՆ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ

Ս. ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ա՛ԻՇՏ մ՚ալ աւելցաւ, ծո՛վ ցաւոցդ Հա՛յ Ազգ,
Դարեր համընթաց վըշտերով պատուած,
Կոյր բաղդը գէ՛թ մի՛ դէպ քեզ չի ժպտած,
Միշտ ճակտիդ կնիք սևով դրոշմած։

Ահա՛ քո՛ սգոտ մռայլուած դէմքիդ,
Դրած ես ձեռքդ կնճռոտ ճակտիդ,
Խոցերով լեցուած էջերը սըրտիդ
Ողբում ես մահը, երկաթէ վեհիդ։

Դու որոնում ես պաշտելի Պետիդ,
Որ ըմնէր դարման շարաւոտ վէրքիդ,
Բայց աւա՜ղ որ (նա) ալ չկայ չկայ՝,
Ինչպէս իր անձը, քո՛ ցաւը զգայ։

Արդէն քա՛ջ գիտես, նորա բազմազան...,
Բողոքներն ընդդէմ անիրաւութեան,
Իբրև կուռ ամրոց քո անձին պաշտպան,
Անձը դրած էր քո սուրբ գոյութեան։

Արդ ծունըր եկած հանդէպ շիրիմին,
Ցաղով, մեղեդով, յուզուած հէկագին,
Մորմոքուած սրտով, քո մե՛ծ կորստին,
Կուտաս համբոյրներ սուրբ գերեզմանին։

Դրուեց հանգստի ի մէջ տաճարին
Սլացաւ հոգին թռաւ դէպ երկին
Քո Պետ պատմական երկաթ Իզմիրլեան
Խլուեց քեզանից ընդմիշտ յաւիտեան



ԽՈՐ ԳՈՒԲԻ ՄԷՋ

ՈՒՐ խոր գուբի մէջ, շուրջս էր ամայի,
Իբրև անզգայ մարմին մը առած,
Մըթին սաղմի մէջ, ես չէի գիտեր,
Այս տեղ թէ այն տեղ... ո՞ւր էի եղած։

Երբ Աստուածութեան պարգևն տուած,
Նուրբ հոգիս տուաւ, շնչուկներ սրտիս,
Իսկոյն կեանք առայ, խուբ աչերս բացի,
Այս ո՞ւր եմ ինկած... շուրջս դիտեցի։

Բանալով աչերս, տեսայ խուռն ամբոխ,
Մարդիկներ անցնում, սրարշաւ լցուած,
Եւ ամէն մենը պոռչում էր, իմ նէ...,
Տեսայ որ միայն, ես եմ մոռացուած։

Եւ ես ալ փութով նրանց խառնուած,
Համակերպեցայ ամենքէն ատուած,
Ո՛հ այս անիծուած ունայն աշխարհէն,
Ցափշտակուեցայ կախարդիչ դէմքէն։

Արդ ի՞նչին հատամ փուճ տիեզերքին,
Անձիս դէմ դաւեր, լարում մշտագին,
Հատ հատ օրիկներս խլում՝ ինծանից,
Իսկի չի հանեց բաժին ժպտանքից։

Եւ ահա՛ հիմի՛ արիւն եմ թքնում,
Կեանքիս օրերու ամէն վայրկեանում,
Վիշտը անպակաս սիրտս է կրծտում,
Առ միշտ յարաժամ հոգիս մորմոքում։

ՆԵՐԿԱՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ես դրօշմեցի ձեր ճակտին սուր,
Սոյն թւականիս թէ ինչ էր հայը,
Խառնակ Բաբելոն ձեր տեսարանը,
Թո՛ղ յաջորդ սերունդ, լինի քննողը։

Որ ամեն մինդ, ճիգեր էք թափում,
Լինել դիրքի տէր, մեծարուել պաշտուել
Խիղճ ու խրղճմտանք մեռեր ձեր սրտում,
Ձեր սին փառքերին, ամեն ինչք... զոհում։

Սէրը վաղուց է տեսնել չեք ուզում,
Սիրահար իրար վրայ յոխորտում,
Մինդ հա՛ միւսին էք միշտ կրծըտում,
Ո՛չ մի՛ ճիւղի... մէջ չունիք ճշտութիւն։

Եղբայր իւր եղբօր վերջին ծայր ատում,
Մինչ իսկ չէ եղած Սոթոմ Գոմորում,
Վերջ մը չունեցաւ ա՜խ այդ տնաքանդ,
Ձեր նսեմ արարք ձեր արիւն ծրծանք։

Դաւ ու մատնութիւն իջեր ասպարէզ,
Եռանդուն ոգով կ՝գործէք սիրակէզ,
Լոկ այդ չըքալիր անձնական օգտին
Ի սէր ձեր միայն կեղտոտ... կոկորդին։

Որը մի՛ չնչին բանի... բռնկում,
Ձէնքի դիմում մի ակնթարթում,
Կիրք ու ոխ արդէն զիրար էք խառներ,
Ամեն սրբութիւն ոտքի տակ տուէր։

Սա «վրէժ» իկրս յետնորդ սերունդին,
Կը թողնեմ կոթող թո՛ղ «նոքա» զատին,
Ձեր եղեռանքներ... զազիր զըզվագին,
Ձեր վայքը տալով ձեր երեսք թքնին։

ՀԱՅ ԱԶԳ

Դէեւ օտարք քեզ սիրում են,
Բայց դու երբեք մի՛ հաւատար,
Որովհետև այդ շոյանքն է,
Կեղծ ու պատիր, անկատար։

Նոքա միշտ էլ սերտ, սրտաբար,
Շռայլում են ժպիտներ,
Եւ ճակտիցդ հա՛ քաղելու,
Կեղծիքով լի՛ համբոյրներ։

Մինչև իրաց նենգ մտային,
Ձիք խորհուրդքն իրակնած
Ճիգ են թափում, հուսկ տեսնելու,
Սև իղձերքն կատարուած։

Բայց դու, հա՛յ ազգ, արթուն կացիր,
Չէ մրափի ժամանակ...,
Նաւիդ ղեկը դու հմտաբար,
Բռներ ձեռքումդ ամրաբար.

Զգոյշ եղիր, կուլ չ՝գնաս,
Փրփրագոռ ալեաց մէջ,
Ցանկարծ չը տաս քո՛ դարևոր,
Վե՛հ գոյութեանդ խպառ վերջ։

Սէր միութեան զէնքը ձեռիդ,
Ամուր բռնիր սրտովին,
Թէ դու, կուզես որ չի մնայ,
Լոկ քո՛ անուն աշխարհին։

ԱԶԳԻ ՊԱՀԱՆՋԸ

ԱՀԱ՛ դարևոր գահը՝ պատմական,
Բազմած վեհապանծ Գէորգ Սուրենեան,
Հօտիդ ընտրեալ, հովիւ թանկագին,
Առ քեզ ողջունում՝ ազգդ սրտագին։

Քո՛ սրբազնութեան ահա՛ վիճակուած,
Հարցեր կան, պէս պէս, քո՛ առջև դրուած,
Որը նախորդներդ... թողին թէրի թէմ,
Տեսնէր ազգդ այդ, քեզնով աւարտուած։

Հայի դարևոր, բաղձանքին լրիւ,
Տայիր լուծում մը՝ յաղթականօրէն,
Որ նա իր յոյսը, քո վրայ դրած,
Վեհիդ կամեցմամբ, լինէր կատարուած։

ՁՕՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.

Սրբազնասուրբ Հայրապետ և Աստուածընտիր
Կարողիկոս Ամենայն հայոց

ՐԱՒԻՐՎԵՑԱՐ ի մեծ Սիօնէն,
Նեռն ապշած նայեց, ոճրանիւթ գահէն,
Ինչպէս ծաղկազարդ, մուտքդ յաղթական,
Նոր օր և նոր կեանք տուիր հայութեան։

Եւ արդէն ահա՛ բազմած կա՛ս գահիդ,
Ո՛վ մեծդ ընտրեալ հովիւ հա՛յ Ազգի,
Աթոռ պատմական, մեր սուրբ հայրերի,
Աթոռ՝ պանծալի, պարծանք հայերի։

Զոր հիմնեալ պարթև մե՛ծն Գրիգորի,
Ի գլուխ կանգնեցար, իշման տաճարի,
Նման Մովսիսի, արթուն դիտելու,
Հօտիդ չարեաց դէմ, միշտ պայքարելու։

Ահա՛ տեսնումես, վիճակ մեր արդէն,
Մեզ կեանք պարգևիր քո՛ այդ գահոյքէն,
Տե՛ս ենք հայրական հայեացքիդ կարօտ,
Եւ կատար ածիր, մեր իղձերք թերոտ։

Հարթիր մեր ուղին, պատած տատասկով,
Հարթիր՝ մեր շաւիղն, փշոտ ու քարոտ,
Տես սա թրծւած, մեր հոգիք մաշոտ,
Մեր սրտեաց նրբին լարիկներ բեկոտ։

Որ արդ նախորդիդ ձեռնարկած գործին,
Պի՛տ գլուխ անցնիս, սրբութեամբ հարցին,
Լիայոյս սրտով դէպ քեզ ենք յառած,
Վեհիդ արդար տեսնենք իրակնած։

Մենք սրտատրոփ նայեմք անհամբեր,
Բուժել ձեռքովդ անհուն մեր վէրքեր,
Դա, արդէն իրօք վեհէդ է կախուած,
Տալու մեր ձեռքը մեր իրաւունքներ։

Որը թողնում ենք զթառատ խղճիդ,
Խղճա վե՛հափառ քո՛ խղճուկ հօտիդ,
Լեր մեր փրկողը, ժանտ շղթաներից,
Դարերով պնդուած Գորդեան հանգուցից։

Կեցցե՛ս դու յաւէտ մեր մեծ վեհապետ,
Կեցցե՛ս բազմատանջ ո՛վ քաջդ հովուապետ,
Տէր մե՛ր երկաթէ անյաղթ Իզմիրլեան,
Պարծանք պաշտելի համայն հայութեան։

ԿԵՂԾ ՀԱՄԲՈՅՐՆԵՐ

Ասդպէս յուսացէք՝ թէ գայլը գառին,
Կը լինի ընկեր, կողք կողքի կ՝ապրին,
Փինջ փնջի տուած կ՝արծին միաստեղ,
Սա քանքաղդ ու քանդ ցաւ աշխարհը նեղ։

Այդպէս յուսացէք՝ առիւծն ու վագրը,
Պի՛տ պարզեն գիրարց ջլոտ բազուկներ,
Իբրև հարազատ եղբարք հայրենեաց,
Մէջը ապրելու բնութեան բարեաց։

Այդպէս յուսացէք՝ թէ փիղն ու ցուլը,
Այլ սերտ կապերով, պի՛տ դաշն կնքեն,
Անտառի մէջի այդ հռետորներ,
Սիրաբուղխ ոգւով, պիտ՝ տան համբոյրներ։

Այդպէս յուսացէք՝ կոկորդիլոսը,
Թափում է անկեղծ շըր շըր արցունքներ,
Եւ վիզը ճկած, նայում հէ՛ք դէմքով,
Գառնուկի նման, անմեղի սրտով։

Այդպէս յուսացէք՝ որ մուկն ու կատուն,
Ոխն իրանց սրտէն, և այլ կը հանուն,
Անցեալը մոռնալով, կուտան թաթիկներ,
Հաշտ աչով նային կ՝ըլլան եղբայրներ։

Այդպէս յուսացէք՝ օձն ու գորտը,
Թէ որ հանդիպին առուց եզերքներ,
Անխարդ բարեկամ մօտկեմօտ գալով,
Պիտի լզվրդեն մինի պոկներ։

Այդպէս յուսացէք՝ կրակն ու ջուրը,
Այլ մինը միւսին պիտ՝ չըլլայ ներհակ,
Պաչիկներ տալով անկեղծ սիրաբար,
Զիրարք գրկելով, կ՝ապրին հաշտաբար։

Այդպէս յուսացէք՝ այլ այսուհետև,
Կ՝ըլլան հաւասար ագռաւն ու սոխակ,
Նա էլ նրան պէս, պատուաւոր էակ,
Պիտ՝ տայ վարդերին, գեղգեղուն դայլակ։

Այդպէս յուսացէք՝ ուժեղը տկարին,
Կ՝ընէ նրան տէր իր իրաւունքին,
Այդպէս յուսացէք՝ գոռոզ մեծատուն,
Կ՝ըլլայ բարեկամ խղճուկ աղքատին։

❧ ❧

ԳՐԻԶ

Գրի՛զ, դու Հային չըլլայ որ ատես,
Պակասը նրան ճակտին դրոշմես,
Թէեւ անտեղի... շռայլ է գովեստ,
Միշտ շոյիր նրան, որ սիրտը շահես։

Թէկուզ (նա) լինի ուղտից ծամառուն,
Ասա՛, նման ես ողորկ սօսենուն,
Իսկ եթէ օր մը, դպչիս իր թեւին,
Գլխիդ լուտանքները կը տեղան գոյն գոյն...։

Գրի՛չ, տուր Հային յարգանք սիրագին,
Մըտէդ չանցընես, թէ նրա ինչին...
Կուզե՞ս որ նրան, դու լաւ երեւաս,
Նետէ քըթըրէն, միշտ անուշ կըլլաս։

Տեսար կեղտի մէջ, երբ փիւֆ հոտում է
Գրի՛ր այդ հոտը վարդի բուրում է.
Քիթդ բռնելով չը նայիս դէմքին,
Գիտնաս որ այդ խիստ ցաւ կազդէ սրտին։

Երբ յանցանքները շարես ճակատին,
Մէկէն խօլըրտին աչքերը վրադ,
Քիթ ու պռկունքը, իսկոյն կը թթուին,
Վեց լիտրը մեղրով մեղայ թէ ուտուին։

Զէ՞ որ հայն արդէն, ո՛չ իրան համար,
Ուրիշին օգտին նա եկեր աշխարհ,
Իւր կենաց փառքը... ոտի տակ տալու
Միայն օտարին սիրտը շահելու։

Սո՛ւս, այդպէս բառեր մի տար երեսին,
Ծածկէ... մի՛ շեշտեր, դուր չեն գար ներսին,
Իւղ լից յարաժամ, հայի անիւին,
Որ չի ճռընչէ նա քո՛ ականջին։

Եկ քեզի, գրի՛չ, գիտցիր քո՛ խօսքեր,
Լեզուդ հեռուներ շատ մի՛ տարածեր,
Ցիսուսի նման դու ալ, կապտակուիս,
Գիտնաս որ Հայը, ճիշդը չի սիրեր։

ԺՈՂՈՎԸ

ԵՐԲ որ հրատապ հայը ո եւ է...
Կարեւոր գործի ժողով մը ընէ,
Նախ քան խնդիրը, երեք անձերը,
Ոխ, ու կիրք, չարիք, ներս կ'հրաւիրէ։

Իբրեւ նախագահ՝, մինը վեր կենում,
Ինչ որ մի քանի բառեր թոթովում,
Լուրջ հարցի միտքը ամիսի պարզելով,
Նստում է տեղը, խոնարհումներով։

Կարծեաց փոխանցման վիճմունք սկսում,
Ցանկարծ սրահը, ժխոր աղմկում,
Իբր ասպարէզ կոկորդ խլրտման,
Բանը հասնում է... բռունցք բաժանման։

Եւ հուսկ աթոռներ ձեռք ձեռքէ խլում
Սրտանց իրարու քիթ պռկունք դուրում.
Ահա քեզ հայի ժողով տուր դմբակ,
Ո՛չ մի ազգ ունի սրան օրինակ։

Լաւ մը իրար հետ հաշիւ տեսնալով,
Կրքերին առատ գոհացում տալով,
Գործը սապէսով՝ լուծման է յանգում
Հարցը աւարտուած ժողովն է ցրւում։

ՄԻՆՉ ԵՐԲ

ՄԻՆՉ երբ պիտ՝ տանինք սա նախատական,
Օտարի լուծը, մեր վզին վրայ,
Մինթէ որ անվերջ, տքնանք ու ճգնանք,
Մեզ բաժին ընկեր հիւծ ու հեծեծանք։

Մինչ երբ թշնամուն ծառայենք կամքին,
Գործիքը եղնինք նրա հաճոյքին,
Դարեր անընդհատ, հեծած մեր ուսին,
Իբր հաւասար մի հեզ գրաստին։

Կաթիլ մը պատիւ արդէն մեր դէմքին,
Իսկի չթողուց խլեց թշնամին,
Խայտառակ դերը (նա) շարունակում,
Պղծում, աւերում, ամեն սրբութիւն։

Թէ կուզենք տեսնել, մեր պատիւ փրկուած,
Սա... եղեռնանքէն ընդմիշտ ազատուած,
Սիրավառ ոգւով, ձեռք պարզենք իրար,
Իջնենք կեանքի դաշտ, սրեր մերկցուցած։

Մինչ երբ օտարի փաթեւենք ոտերուն,
Դուք հայցենք նրա, անխիղճ քար սրտէն,
Դեռ բաւ չէ՞ կուչ գանք... քաջ գիտենք արդէն
Պոկընիս չորցաւ փէշն համբուրելէն։

ՍԷՐ

ՄԻՆՉ երբ լոկ գոչենք կենցէ Հայաստան,
Սերտ սիրով ճուլուած, պէտք է գործնականն,
Նա առնենք խլուած, մեր ազգի... փառքը
Ապա թէ ասենք, կենցէ Հայաստան։

Փարուինք իրարու սիրով սրտազին,
Ինչպէս մի հոգի, մի սիրտ, մի մարմին,
Սէրն է՝ փրկողը, անկեալ Հայութեան,
Սիրով պիտ յաղթենք այնինչ... ամեն բան։

Սիրով մենք միայն, մեր սուրբ աշխարհը,
Թշնամուց կառնենք, կըլլանք զուտ տէրը,
Սիրով պիտ վանենք մեզ տիրող ցեղին.
Սիրով՝ վերջ պիտ տանք, մեր սև օրերին։

Սիրով պիտ հասնինք Հայք մեր ըղձանքին,
Տէրը պիտ ըլլանք լրիւ մեր անձին,
Հանգիստ հայրենեաց, գիրկն հարազատ,
Ապա իրրև մարդ, պիտ ապրինք ազատ։

Ամեն ազգութիւն հասաւ իր փառքին,
Դեռ մենք ծառայ ենք թշնամու կամքին...
Ինչո՞ւ այն ազատ ազգերի կարգին,
Չունենանք բաղդը ապրել մարդկային։

ՑՈՒՑԱԿ

	Էջ
Խաչատուր Աբովեանի	5
Վէրք Հայաստանի Հեղինակին	6
Վարդին Սոխակը	8
Աչուն	10
Սեւ ծովը	12
Սահմանադրութիւն	14
Գարունը	16
Լուսինը	18
Զանգակներ	20
Իզմիրլեանի յիշատակին	22
Խոր գուբի մէջ	24
Ներկայ Հայութեան	26
Հայ աղջ	28
Աղջի պահանջը	30
Տ. Տ. Մատթէոս Բ	31
Կեղծ համբոյրներ	33
Գրիչ	35
Ժողովը	37
Մինչ Երբ	38
Սէր	39

ՎՐԻՊԱԿ ՈՒՂՂԵԼԻՔ

Էջ	Տող		
7	5	Նկարագրեր	Նկարագրիր
10	18	Նանանջում	Նահանգում
10	20	Հովտանքներով	Ծովտանքներով
12	6	ցանցեր	ցանցիր
15	12	տէրեանք	տիրեանք
17	4	ին	են
18	5	Ո՞ր	Որ
20	18	Ինանք	Ինաք
22	6	կնճռոտ	կնճրոտ
27	2	զէնքի	զէնքի էք
28	9	իրաց	իրանց
28	10	իրակնած	աւարտած
28	30	իղձերքն	իղձերըն
28	16	բոներ	բոնի՛ր
31	16	Եւ կատար	Ի կատար

ՀՀ Ազգային գրադարան
NL0363844

60375